ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻՑ

Թեմա՝ << Կոմիտասի ծիսական և աշխատանքային երգերի նկատմամբ աշակերտների հետաքրքրության զարգացումը ուսուցման գործընթացում >>

Կազմեց՝ Գայանե Ռոբերտի Ստեփանյան
(անուն հայրանուն ազգանուն)

Ղեկավար՝ Միլենա Մինասյան

<< Կարճևանի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ
(դպրոցի անվանումը)

2022

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան 3

Կոմիտասի ծիսական և աշխատանքային երգերի նկատմամբ աշակերտների հետաքրքրության զարգացումը ուսուցման գործընթացում 4

Եզրակացություն 13

Դասի պլան 14

Օգտագործված գրականության ցանկ 15

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայ երաժշտական մշակույթի մեջ բացառիկ դեր ունի Կոմիտասը իր ստեղծագործություններով: Կոմիտասն իր կարճ կյանքի ընթացքում ծավալեց արդյունաշատ գործունեություն հայ երաժշտական արվեստի զարգացման գործում: Նա ստեղծեց հայ երաժշտության ազգային ոճը: Կոմիտասի մասին կարելի է անվերջ խոսել, պատմել, նրա բոլոր արժանիքների կատարած գործերի, հայրենասիրության մասին: Նրա ծիսական և աշխատանքային երգերի մասին սերունդները փոխանցում են ազգային ոգին, ծանոթանում մեր նախնիների հոգևոր կյանքին:

Հանրակրթական դպրոցներում <<Երաժշտություն >> առարկան երեխաներին ներգրավվում է երաժշտական աշխարահ և սովորեցնում լսելու, երգելու, պարելու, հորինելու երաժշտական արվեստի մեջ:

Հայ երաժշտությունը, ինչպես Կոմիտասն է ասում, << այնքան հարազատ է ու ազգային և այնքան ինքնուրույն է ու ինքնատիպ, որքան իր լեզուն ու գրականությունը >>:

Կոմիտասի ծիսական և աշխատանքային երգերի նկատմամբ աշակերտների հետաքրքրության զարգացումը ուսուցման գործընթացում

<< Զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին, խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է: Սխալ ուղությամբ՝ ազգ մը կխորտակեք վերջը >>:

Կոմիտաս

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր երաժշտական լեզուն, իր խոսակցական լեզուն և բոլորի պարտքն է լավ իմանալ թե մայրենի և թե ազգայն երաժշտության լեզուն: Դպրոցում երաժշտության ժամին երեխաները ծանոթանում են հայկական ժողովրդական երգի տեսակներին, մշակույթին և այլն:

Կոմիտասը իր ժողովրդին վերադարձրեց սեփական երգը << ազգային >> երգը: Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյան) հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրներից է: Նրա անունով է կոչվում Երևանի պետական կոնսերվատորիան:

Կոմիտասը գրել է շատ – շատ երգեր, ծիսական երգեր, աշխատանքային երգեր, որոնք այսօր մենք երաժշտության դասաժամին սովորեցնում ենք երեխաներին:

Հայ ժողովուրդը բոլոր ժամանակներում եղել է աշխատասեր, իր հանապազօրեա հացը իր քրտինքով է աշխատել և աշխատելու ընթացքում երգել են Կոմիտասի աշխատանքային երգերը:

Օրինակ՝ << Քաղհան >> երգը որի ժամանակ մարդիկ բամբակ են ցանել:



ՔԱՂՀԱՆ

Գարնան գութան հանեցի,

Յար, նայ, նայ, նայ, նայ, նայ

Արտը բամբակ ցանեցի,

Սոնա յար, նայ, նայ, նայ:

Իսկական ժողովրդական երգը գյուղի աշխատավորի ստեղծած երգն է, ասել է Կոմիտասը:

Նրա աշխատանքային երգերից են << Սանդի երգը >>, << Խնոցու երգը>>, << Ճախարակի երգը >> և այլն:

Աշխատելու ժամանակ մարդիկ նկարելով թռչուններին, նրանց մասին էլ են երգել: Օրնակ՝ << Լորի >> երգը:

Առավոտեան փչեց հով,

Արտը ծփաց, դարձավ ծով,

Արտի միջից թռավ լոր,

Թռավ, ընկավ սար ու ձոր:

Կրկներգ – Կլորիկ, կլորիկ, այ լորի

Օրոր, մորոր, շորորիկ:

Աշխատանքային երգերից է նաև << Կոտ ու կես >> երգը: Այս երգում մի մարդ կորեկ է ուզում ցանել, իսկ չարաճճի ճնճղուկները թռչում գալս

են, որ ուտեն: Ուսուցման գործընթացում մեծ հետաքրքրություն է առաջանում աշակերտների մեջ, երբ լսում և սովորում են նաև Կոմիտասի ծիսական երգերից:

Ծիսական երգերը նվիրված են ժողովրդական ավանդույթներին, արարողություններին: Դրանք են հարսանեկան, տոնակատարություններին՝ Վարդավառին, Սուրբ Ծնունդին, Տյառնընդառաջին, Բարեկենդանին նվիրված երգերը:

Ծիսական երգերից է նաև << Թագվորի մեր, դուրս արի >> երգը, որը բնույթով կատակերգ է: Հարսանիքի օրերին հարսն ու փեսան թագուհի ու թագավոր էին կարգում, տոնական զգեստներ հագցնում:

Թագվորի մեր, դուրս արի

Թագվորի մեր դուրս արի,

Տես քե ինչեր ենք բերե,

Թաքվորի մեր, դուս արի,

Քե մենք հարսիկ ենք բերե:

Սուրբ Ծննդյան օրը դա Հիսուս Քրիստոսի ծննդյան տոնն է, որի ժամանակ մարդիկ իրար ողջունում են և ասում. << Քրիստոս ծնավ և հյտնեցավ, մեզ և ձեզ մեծ ավետիս >>: Եվ պատասխանն ասում են << Օրհնյալ է հարությունը Քրիստոսի >> :

Սուրբ ծննդյան օրը մարդիկ ծիսական ուտելիքնե են պատրաստում և իրար հյուրասիրում: Հին ժամանակներում երեխաները գնում էին տնից տուն երգում << Ավետիս >> : Տան տերերը նրանց համեղ ուտելիքներ էին տալիս, նվերներ տալիս և երեխաները ուրախ – ուրախ գնում էին հաջորդ տունը:



Ա Վ Ե Տ Ի Ս

Ամեն տարի հասնինք բարով, ավետիս,
Երկար կյանքով, առողջ անձով, ավետիս,
Մի կենաք հետ մարդու խռով, ավետիս,
Եվ մի նայիք խիստ խոժոռով, ավետիս…

Կոմիտասի բարեկենդանը գարնանամուտի տոն է կատարված բնության զարթոնքի հետ: Հնում մադիկ երգել են ու պարել մի ամբողջ շաբաթ, խաղեր կազմակերպել:

Կոմիտասի ծիսական երգերից են նաև << Զատիկ >>, << Խնկի ծառ >>, << Համբարձման երկուշաբթի >>, << Սոնա յար >> երգերը:

Զատիկը նվիրված է Հիսուս Քրիստոսի հարության տոնին: Այս տոնի ժամանակ ծիսական ուտելիքներ են պատրաստում, ցորեն են ծլեցնում սկուտեղների մեջ, կարմիր ներկած ձվեր են շարում և իրար հյուրասիրում: Երեխաները խաղեր են խաղում՝ ձու կռվեցնում, ձու գլորում:

Իսկ Համբարձման տոնին գյուղի աղջիկները դաշտ են գնում, ծաղկեփնջեր կազմում ու բաժանում մարդկանց: Մարդիկ գնում են բնության գիրկը, պարում, երգում և ուրախանում:

ԽՆԿԻ ԾԱՌ

Մեր դռանը խնկի ծառ,
Գյուլում ջան,
Ձեր դռանը՝ խնկի ծառ
Գյուլում ջան,
Խնկենին ա բերել բար,
Գյուլում ջան,
Իմ խորոտիկ պստիկ յար,
Գյուլում ջան:

Կոմիտասն ասել է, << Երաժշտությունը տիեզերական այն լեզուն է, որով << առանց թարգմանի >> մարդկանց հոգիները հաղորդակցվում են >> : Այս աշխարհում միայն մի գիր կա, որը հասկանալի է բոլոր ժողովուրդներին, դա երաժշտությունն է:

Տարրական դասարաններում << Երաժշտություն >> առարկայի պահանջմունքն է կատարել երգը, պարը, ունկնդրել, զարգացնել երգելու կարողությունները: Երգեցողությունը երեխայի երաժշտական գործունեության ամենասիրելի, մատչելի և կարևոր ձևերից է:

Կոմիտասի շնորհիվ բազմաթիվ երգեր և պարեր են հասել մեզ: Նրա Կատարած գործերից մեկը նա է, որ նա հավաքագրել է հայկական ժողովրդական երգեր և պարեր:

Հավաքագրել նշանակում է, որ նա շրջել է ամբողջ Հայաստանում գյուղից – գյուղ, քաղաքից – քաղաք, լսել երգեր և այդ երգերը գրի է առել: Կոմիտասը գրի է առել ոչ միայն երգեր, այլ նաև մեղեդիներ և այսօր էլ կատարում են և կատարել են շատ երգիչներ, երգչախմբեր: Նա եղել է շատ լավ խմբավար: Կոմիտասի երգերը երեխանները շատ արագ են սովորում, սիրում, ընկալում: Կոմիտասը մեր ժողովրդի հպարտությունն է, մեր ազգային անսպառ հարստությունն է նրա գործը:

Կոմպոզիտոր, ազգագրագետ, գիտնական, մանկավարժ, խմբավար, երգիչ, հզոր եռանդի տեր արվեստագետ՝ Կոմիտասին վիճակվեց շրջադարձային դեր խաղալ հայկական երժշտական մշակույթի պատմության, զարգացման ճանապրհին: Ազգայինի հավատարիմ ջատագովը չսահմանափակվեց ազգային նեղ շրջանակներով: Նա առաջիններից էր հայ կոմպոզիտորներից, ով խորությամբ ուսումնասիրեց մերձավոր արևելքի ժողովուրդների երաժշտությունը. օրինակ՝ քրդական ժողովրդական երգերը: Կոմիտասի արվեստը ուղղակի ներգոծեց հայ երաժշտական մշակույթի ողջ ընթացքի վրա: Հայ երաժիշտների մի քանի սերունդներ որդեգրեցին նրա գեղարվեստական սկզբունքները, համարձակորեն ընդլայնեցին նրա նշագրված ուղիները: Էջմիածնում անցկացրած տարիներին Կոմիտասը

հաղորդակից եղավ հայ մշակույթին, պատմությանը, գրականությանը, սակայն նրա վրա ամենամեծ ազդեցությունը թողեցին հայ գեղջուկի երգն ու երաժշտությունը, և ուսումնառության տարիներից նա իր կյանքը նվիրեց ժողովրդական երգերի գրառմանը, ուսումնասիրությանը, այնուհետև դրանց մշակմանը:

- ✓ Աշխատանքային երգեր
- ✓ Ծիսական երգեր
- ✓ Պարերգեր
- ✓ Վիպերգեր
- ✓ Պատմական երգեր
- ✓ Կատակ երգեր
- ✓ Օրորներ
- ✓ Քնարական երգեր
- ✓ Պանդխտության երգեր

Աշխատանքային երգեր

Աշխատանքային են կոչվում այն բոլոր երգերը, որոնք պատկերում են նյութական բարիքներ ստեղծող զանազան պրոցեսներ: Ժողովրդական երգի այս ժանրը ունի երկու տարատեսակ՝

1) երկրագործական աշխատանքնեի երգեր և հորովելներ
2) կանանց աշխատանքային երգեր:

1. ***Երկրագործական աշխատանքային երգեր և հորովելներ***:

Հորովելները գեղարվեստական արտացոլումն են գեղջուկի երկրագործական բազմապիսի աշխատանքների: Վարելիք տարածությունները եղել են մեծ, իսկ գութան ունեցել են ոչ բոլոր: Ենթադրվում է, որ հորովել բառը ծագել է << Հո >> բացականչությունից և << առավել >> բառի միասնությունից: << Առավելը >> դա երկու հարևան արտերն իրարից բաժանող մասն է, որն իբրև սահմանագիծ չի մշակվել: Եզները հանգստացել են << Առավելում >>: Աշխատանքի ազատ բնույթը

պայմանավորվել է հորովելների ստեղծագործման ինքնաբուխ ու իմպրովիզացիոն բնույթը, նրանց ազատ կառուցվածքը: Հորովելների բանաստեղծական տեքստի ազատ կառուցվածքի հետ մեկտեղ որոշ տարրեր գրեթե բացականչությունները՝ << Հո >>, << Հոլեր >>, << Հոմ >> և այլն: Հորովելների բացականչությունների լայն օգտագործումն ունի երկու հիմք. մեկը Հայաստանի լեռնային բնությունն է, բացականչությունների մյուս բացատրությունը կապվում է դեռևս հեթանոսական ժամանակների հետ: Հնում հողագործական աշխատանքների հաջողության համար դիմում էին Աստծուն, աղերսում անձրև կամ արև, օգնության կանչում բնության մյուս ուժերի: Հորովելները, ինչպես բոլոր աշխատանքային երգերը, հորինվում ու երգում են աշխատանքի պրոցեսում: Ահա թե ինչու Կոմիտասը հորովելները երբեմն անվանում է շինական, երբեմն բնության երգեր:

2. Կանանց աշխատանքային երգեր:

Կանանց աշխատանքային երգերը դրսևորվում են գեղջկուհու բազմապիսի աշխատանքներ (թել մանել, խնոցի հարել, բուրդ զզել, հաց թխել, հնձվորին հաց տանել և այլն):

Սիրո մոտիվները կանանց աշխատանքային երգերում նկատելի տեղ են գրավում: Դրա հետ մեկտեղ նրանցում կերտված է գեղջկուհու կերպարը դեպի աշխատանք ունեցած նրա սիրո, հույսերի ու հոգեկան ապրումների անսահման երանգներով: Կանանց աշխատանքային երգերն ունեն լիրիկական ջերմ երանգ, որը բխում է նրանց աշխատանքային գործիքների նկատմամբ հոգատար վերաբերմունքից:

Խնոցի ջան խնոցի,
Կարագ հանի, խնոցի …

ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ծես նշանակում է կարգ: Կարգը կամ ծեսը սահմանվում է իր իսկ հասարակության կողմից՝ համակեցության օրենքները կանոնավորելու համար:

Ծիսական երգերը դասակարգվում են երեք խմբում.

ա) Հարսանեկան երգեր

բ) Ողբեր կամ մահերգեր

գ) Տարբեր ծեսերի և տոնակատարությունների երգեր

Հարսանեկան երգեր

Հարսանեկան են կոչվում այն բոլոր երգերը, որոնք կատարվում են հարսանիքների ժամանակ: Հանդեսը հաճախ ներկայացվել է մի թատերականացված արարողություն, որտեղ տեղ են գտել զանազան տիպի խաղեր: Նահապետական ընտանիքի գոյության պայմաններում ամուսնությունը գյուղի հասարակական կյանքի կարևորագույն իրադարձություններից մեկն էր: Հարսանիքները տեղի են ունեցել հիմնականում աշնանը, երբ ավարտված էր բերքահավաքը: Ամուսնության հաջողության համար նշանակություն է ունեցել կրոնական նույն դավանանքին, միևնույն ազգային պատկանելու պայմանը: Աղջկա ընտրությունը կատարել են տղայի ծնողները, գնացել են խնամախոսության, կամ տղայի մայրը եկեղեցում իր ընտրած աղջկան մոմ է տվել, թաշկինակ – քող գցել նրա գլխին:

Հարսանեկան երգերը իրենց բազմազանությամբ և յուրօրինակությամբ դրսևորել են ժողովրդի հասարակական և ընտանեկան կենցաղը, տալիս է հարուստ նյութ նահապետական ընտանիքի բարքերն ու սովորույթները, ուսոումնասիրելու համար: Նրանք միաժամանակ ստեղծում են հետաքրքիր տեսարաններ, ինչպես Կոմիտասն է արտահայտվում, շքեղ գեղարվեստական, բանաստեղծական ներկայացումներ:

Օրինակ՝ Թագվորի մեր դուրս արի,

Տես քե ինչեր ենք բերել:

ՏԱՐԲԵՐ ԾԵՍԵՐԻ ՈՒ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԳԵՐ

Տարբեր ծեսերի ու տոնակատարությունների երգերը պատմում են կենցաղի մեջ արմատավորված զանազան արարողությունները, սովորույթները, նկարագրում ամբողջ տոնակատարությունները և այլն: Տոնակատարություններից հատկապես ճոխ են եղել և բոլորին մեծ զվարճություն պատճառել Համբարձումն ու Վարդավառը, կամ ջրի ծառի ու ծաղկի պաշտամունքի տոները:

Համբարձման տոնը թեպետ կատարվում է Քրիստսի համբարձման օրը, բայց պետք է ենթադրել, որ այն գոյություն է ունեցել նախաքրիստոնեական շրջանում: Ըստ ժողովրդական հավատալիքների, Համբարձման գիշերը իբրև թե բոլոր բույսերը իրար հետ զրուցում են, ջրերը բոպեական կանգ են առնում, գերբնական զորություն ստանում, եթե այդ ջրի մեջ որևէ առարկա գցեն ու ցանկություն հայտնեն՝ ոսկի կդառնա, բուժիչ հատկություն կունենա և այլն:

<< Եթե մանուկը չի հասկնար ձեր դասավանդությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անո հոգին: Պետք է իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ՝ բարձրացնել >>:

Կոմիտաս

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով կարող ենք ասել, որ տարրական դասարանի երաժշտության ծրագրերն ունեն թեմատիկ կառուցվածք, որտեղ հնարավորություն է տալիս աշակերտներին երաժշական տեսակները միավորելու մեկ թեմայի մեջ: Դրանք մեկը մյուսի հետ կապված են և ստեղծում են գիտելիքների ձեռք բերում, հմտությունների զարգացման համակարգ:

Չորրորդ դասարանում << Իմ ժողովրդի երաժշտությունը >> թմայի մեջ Կոմիտասն ասել է << հայ երաժշտությունը այնքան հարազատ է ու ազգային և այնքան ինքնուրույն է ու ինքնատիպ, որքան իր լեզուն ու գրականությունը >>:

Կոմիտասը կարևորել է երաժշտական դասագրքերի հայերենով ստեղծման գործը և զբաղվել դրանով: Կոմիտասի երգեը լսելով աշակերտները հասկանում են, որ ժողովրդական երգը ստեղծել է ժողովուրդը՝ իր մտքերի, զգացմունքների, կենցաղի, բնավորության արտահայտությունը: Կոմիտասը մոռացությունից փրկեց հայ գեղջուկի երգը: Նրա գործունեությունն այս տեսակետից համեմատելի է Մեսրոպ Մաշտոցի սխրանքի հետ: Կոմիտաս վարդապետը՝ պեղեց, մաքրեց և լույս աշխարհ բերեց հայ երգը, հայկական ծեսերը և մինչև օրս հայ ժողովուրդը սերնդեսերունդ շարունակ լսում, սովորում և պահպանում է նրա բոլոր երգերն ու ստեղծագործությունները:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկան՝ երաժշտություն

Դասարան՝ 4-րդ

Դասի թեման՝ Աշխատանքային և ծիսական երգեր

Դասի նպատակը

- ✓ ծանոթացնել աշխատանքային և ծիսական երգերին
- ✓ ձևավորել աշխատանքային և ծիսական երգերի ունկնդրելու և վերլուծելու ունակությունները
- ✓ վերլուծելու կարողություններ և հմտություններ
- ✓ զարգացնել ծիսական և աշխատանքային երաժշտությունը
- ✓ դաստիարակել սեր և հետաքրքրություն հայկական ժողովրդական երաժշտության հանդեպ և արժևորել այն

Ակնկալվող արդյունքները՝

- ✓ Աշակերտները կծանոթանան Կոմիտասի աշխատանքային և ծիսական երգերին:
- ✓ Կիմանան ծեսերի կարևոր դերի մասին:
- ✓ Կկարողանան ունկնդրել, վերլուծել այդ երգերը:

Դասի բնույթը՝ անցած նյութն ամրապնդող, նոր նյութի հաղորդման դաս:

Դասի կահավորումը՝ համակարգիչ, մեծ էկրան

Դասի ընթացք.

1. Անցած նյութի ամրապնդում
2. << Թագվորի մեր դուս արի >> երգի ունկնդրում, կատարում
3. Նոր նյութի հաղորդում
4. Դասի ամփոփում և գնահատում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՑԱՆԿ

1. Երաժշտությունը 1- 4 –րդ դասարաններում, << Զանգակ >> հրատարակչություն, Երևան 2011:
2. << Երաժշտություն >> առարկայի չափորոշիչ և ծրագիր:
3. Բրուտյան Մ. Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Երևան 1971, II հրատ՝. 1983, III հրատ՝. 2004:
4. Գյոդակյան Գ. Էջեր հայ երաժշտության պատմությունից, Երևան 2009: